

## Անկախ ատղիտորական եզրակացություն

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի բաժնետերերին և խորհրդին

Մենք ատղիտի ենք ենթարկել «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2012թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

### *Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված ատղիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք ատղիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և ատղիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել ատղիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են ատղիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս ատղիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան ատղիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

«Ղեկույթ» անվանումը վերաբերում է «Ղեկույթ Քուչ Թոմսոնսոն» ընկերությունների ընկերությանը, որոնք հանդիսանում են անկախ իրավաբանական անձիք, որոնք ստեղծվել են Եվրոպայի օրենսդրության նիւնոն գլու (Swiss Verein) «Ղեկույթ Քուչ Թոմսոնսոն»-ի և նրա մեջ մտնող ընկերությունների վարչակազմակերպական կառուցվածքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է [www.deloitte.com/abou](http://www.deloitte.com/abou) կայքում:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

### Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2012թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

### Այլ նշումներ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները 2011թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որն արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ 2012թ. ապրիլի 27-ին:

Սրբուհի Հակոբյան  
Բաժնետեր/Գործադիր տնօրեն

Արեն Աղաջանյան  
Աուդիտի ղեկավար



Դելոյթ Արմենիա ՓԲԸ  
2013թ. ապրիլի 16